

Սեդա Վերմիշևա

ՀԱՅԱՍՏԱՆԸ Է ԻՄ ՎԱՅԱՆՆ ՈՒ ՍՈՒՐԸ

(բանաստեղծություններ)

Առաջին մաս

ԻՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԵՍ-Ը

Հայաստանն իմ տոհմն է,

Իմ ժառանգությունը:

Իմ վահանն ու սուրը:

Գլխիս՝ ձեռք հայրական...

Որքան հեռու են քո կածաններից

Ծաղկազարդ բացատներն

Իմ մանկական...

Այլ լեզվով են հնչում

Իմ տողերն իրական...

Բայց ապրում եմ քո մեջ:

Քո արգանդում եմ

Հղացվել:

Ես ծնունդ եմ առել

Հենց քո կամքով...

Ծերպերում մագիլված

Բնին

Տոհմածառի

Շյուղ եմ կանաչ...

Ուստի ե՛ս էլ անմահ

Ոգին եմ քո...

(2)

Իմ գերագույն Ես-ը

Ողջ բարբառներն է ընդգրկել,

Որպես սոսափյունը սիզախոտ ու սեզի:

Այնտեղից, ուր գետեղված է քարտեզային

Միջագետքը

Եփրատ ու Տիգրիսի –

Ես պտուղներ տարա

Յյուսիս,

Յեռու-հեռու՝ այնտեղ,

Ուր հողմ կա, մառախուղ,

Ուր աստղերն են պայծառ,

Օվկիանոսն է ահեղ...

Ահա տիրույթներս –

Լուսնային բացատներ, –

Այնտեղ կորուստներ կան,

Եվ տարածքն է հատնել...

Բայց ինձ վիճակված է

Յաղագս երկնային նրանց լույսի –

Յայտնել...

(4)

.....

Ես չընթերցված սեպագիր եմ, որ կամ

Չեչոտ

Ծերպին...

Ինձ թաղել են հարյուր հազար անգամ...

Խոնարհվեք իմ

Հողի առաջ...

Լռակյաց քանդակ եմ ողբի –

Ավերակված

Քար եմ,

Ավազ...

Ստեղծանամբ եմ ընծյուղված...

Արևելքն ինձ օղաթոկով իր հարեմն է քաշում,

Հարթավայրերն են ներծուկվել հուշում...

Միայն թե ես անկարող եմ, –

Ես թռչուն եմ:

Ժայռածերպն իմ տունն է:

(5)

Ես կենդանի սերմնարանն եմ

Ապագա հիմքերի,

Որ ակունքի խոսքն ու զորությունն է բերում:

Ես մեծ քաղաքների

Օրենքներին խորթ եմ,

Եվ արյանը,

Որ հոսում է Արևելքի երակներում:

Եվ բոլոր շերտերում

Քմարարքի ու հանճարի –

Ես տեղ չունեմ.

Մասնակից չեմ նրանց ծիսատունին,

Ես դեռ չեմ թոթափել իմ ծնկների հողը,

Ականջալուր եմ ընդերքին: Երկնի հարկատուն եմ...

Խոտը շուրջբոլորս

Անախորժ է, –

Դառնահամ է ու դարձդարձիկ

Թանձր մացառուտը,

Արքայությունը և դարը...

Եվ բացատը նախեղակ է շնչում –

Չսպելով դարերի ընթացքը սլացիկ:

Իսկ ես ասքի հանգույն

Կանգնել ու ճոճվում եմ

Կոպերս գոցելով ու ձեռքերս ծալած, –

Ժամն է՝ և բոժոժը կենդանություն առավ...

Տարածության մեջ եմ

Ես բաղձալի դարի.
Չորս ծագեր աշխարհի –
Մեջտեղում տևում եմ...

Ես կավին եմ նման
Բրուտի դազգահի,
Պտտվում է դուրզը,
Եվ ողջն առջևում է: (6)

Ես մատուռ եմ
Խոնարիված ծնկների, գլուխների խոնարի:

Թխպոտ ժամին
Կանչ եմ
Չանգակատան,
Երբ կաշկանդիչ
Շղթան է
Փշրվում...

Նրանցն եմ, ով անբարեհաճ բախտի նշանն ունի:

Եվ անհանգիստ հոգով վտարակի համար –

Ես Տաճար եմ, կամ Էլ
Հույս եմ,
Ապաստան եմ:

Քաղցածին
(կշտացնող)
Հաց եմ,

Խռովարար հոգուն –
Տափաստան եմ:
Ես մասնակցություն եմ,
Ո՛չ հլրություն,
Այլ՝ Էություն...

Ընդմեջ քնի ու արթնության ես ձեզ համար

Թե՛ ընթացք եմ,
Թե՛ ճանապարհ...

(7)

Քաղաքակրթություն:

Եվ հորդաներ:

Բեկվածքներ ու

Քառս:

Եվ ռացիոնալ հատիկ պեղված:

Փոփոխականություն:

Ու քրոմոսոմների համառություն...

Այդ ամենն է իմ մեջ –

Համատեղված...

(8)

Ի՞նչ են

Օրն ու տարին,

Եվ ո՞րն է ուժն անկումների: –

Անգամ հաղթահարված –

Ողջ եմ նորից...

Ջանքի հանդեպ նախանձախնդիր եմ,

Ներել եմ բոլորին: –

Իմ կամակորոթյան

Ջամառ բառերը սեպում եմ

Ժայռ ու ծերպին:

Քարից ամուր,

Գրանիտից դիմացկուն եմ:

Երկնքում է հառնել

Տաճարն իմ անթերի...

Լավայով է հողն իմ պատված,

Եվ տեղը զիջում է

Միայն դամբաններին...

(9)

Ա. Ն. Չելինսկու դասախոսության

Մտորվներով

Ես եմ Ալֆան ու Օմեգան:

Ես` միայն հող:

Ես ձայնն եմ աշխարհի,

Շյուղն եմ Նրա ծառի,

Աստծո արձագանքն եմ,

Աստծո առաջ –

Երկյուղած եմ, սրդող:

Ես կյանքն եմ կույր –
Դարիվեր սողացող,
Բիբլիական Տապան
Ձևաբքում...

Պլոկված ծնկներով...
Ես Ամենագորի դիմաց –
Ոչինչ:

Բայց ինձ դիպվածը չի
Կառավարում:
Թափանց գաղափարն է
Սառցասալերն ի վեր
Առաջնորդում հաճախ:

Եվ մահ չկա:
Արեգակն է շիկնում...
Նահանջելու համար
Չունեմ
Պատճառ...

(10)

Քամի եմ,
Փոթորիկ:
Ծով լազուրում հուռթի
Պիսակ եմ հովազի

Արևային մորթի:
Թեթև անցնում եմ ես,
Ճկուն, առանց ահի,
Ծերպից-ծերպ եմ ոստնում
Եզրով վիհի,
Վիհի...

Ջնչիր, ցավ իմ, հնչիր –
Իմ դարավոր հնչող,
Ջանց զանգ նախագուշակ –
Ժամերգության կանչող:

Քամին թափանցում է,
Կտրուկ է, հեգում է,
Մոլեգնում, խոցում է,
Ուսերս բեկում է:
Վանատան վերևում
Ագռավն է երևում,
Կռավում չարագույժ.
«Մարդու արյան գույնի
Արյունն ի՞նչ գույն ունի»...

Սիրտս կծկվում է
Ու թաքտում է հույժ
Սույլից թրատումի...

(11)

Ես չեմ տեսել ավելի գեղեցիկ մի ժամանակ.

Ամրապնդված հոգիս վերասլաց

Թռավ-անցավ:

Ես թողեցի դանայացիներին՝ ընծաները համակ:

Դրանց ձեռք չտվի

Ու՛ր ողջ պրծա:

Վետվետացող լույսում նրանց

Չեմ հասանի:

Թեկուզ դաշույնների բոցով խաչվեն

Գնդակներ բյուր-հազար...

Քանի դեռ բարձրում եմ –

Ամպ չեմ,

Թռչուն եմ միամիտ:

Եվ երգում է քամին

Գաղտնիքն իր սրբազան...

Իմ մարտականչը կա –

Ժամանակին հղված

Եվ ողորմածությանն

Ստրկական...

(12)

Եվ ահա սա՛ է քո ուղին...

Եվ թող սուրա

Քո ձին ահեղ...

Կանգառ չկա ոչ մի բույս, –

Ձախից՝ վախճան, աչից՝ մահ է,

Դեմն՝ ամպրոպ է:

Լոկ Տիրակալ-ճանապարհն է

Իմաստը

Կեցության...

(13)

Յողուններում չեմ բնակվում

Եվ ի դուրս եմ ամբողջովին:

Հանց գիշերով բացված

Ծաղիկ –

Ողջս ձգտում եմ

Ջերմության,

Անձրևին ու հովին...

Եվ մերթընդմերթ

Արևին եմ պարզվում

Մի ծաղկաթերթ...

(14)

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔՍ ԸՆԴՈՒՆԻՐ-

ԻՄ ԶԱՅՐԵՆԻՔ

Քանի դեռ հնչում է

Տարածությունն իմ մեջ –

Քո ծառան եմ...

«Սիրում եմ» –
Դա ասես հմայախոսք լինի
Չարից ու փորձանքից...

Յո՛ղ հայրենի,
Խոստովանանքս ընդունիր...

Ասես մի հավք –
Ես ճախրում եմ վերից...
Ինձ թևերս
Բոլոր ծովերի վրայով
Դեպի քեզ են բերում...

Քանի դեռ շնչում եմ,
Քանի դեռ կամ,
Քանի դեռ հնչում է
Տարածությունն իմ մեջ –

Քո ծառան եմ...

(16)

Իմ Հայաստան,
Իմ լեռնային արծիվ...
Սերս
Տաճարն է իմ հույսի...

Թույլ տուր՝

Ակունքներիդ հասնեմ,
Իմ հայրենիք,
Քո գրնգուն
Աղբյուրներում
Դեմքս օծեմ...

Ներիր իմ մեղքերը,
Իմ գոռոզությունն ու
Չարությունը, –
Իմ արածը չեմ հասկացել...

Ի վերա քո
Թող հավերժող լույսը տևի –
Կյանքս քո մեջ
Կուզենայի
Ես անշշուկ լուծել...

(17)

Քեզ եմ հակվում, կանչում,
Ո՞նց եմ տենչում
Քեզ տեսնել վերստին...
Ողջ հողագունդը –
Գարնանը թուփ է ծաղկած,
Ուր քո հանգույն –
Հողի շնչառության
Մի ծաղիկ կա...

Ո՞նց եմ սիրում

Թախիծը քո լեռնաշխարհի...

Քո սրինգն եմ սիրում,
Որ այգաբացն ի վեր
Ծյուրում է ի վերա քաղաքների,
Անդորրի, հերկերի...

Թե՛ ձայնը շեփորիդ, թե՛ անգամ պիծակիդ
Տզգոցը անհանգիստ...

Երանելի է այն կանչը,
Որն այգն ի վեր հնչեցնում է
Ձայն սրնգի....

(18)

Իմ երկիրը.
- Նրա հետ ի՞նչ
Համեմատեմ,- հարցրեք:
Բարձր է բոլոր վեհանիստ
Ափերից:
Ժամանակին չի լինում անձնատուր,
Հավքի սավառնումից բարձր է
Իմ երկիրը՝ արծվաբույն,
Ուր երկինքն է
Կտուր:

Իմ երկիրը –
Տոն՝ արևով լեցուն...

Եվ զուռնան է իրախճացնում ամենեցուն...

Չմայված գնում են ետքից կանչի

Որպես նրա ճորտը

Կամ հարկատուն.

Գուցե դրանի՞ց է, որ ես այսօր

Ողջ եմ...

(19)

Արարքի մեջ է սկիզբը Կեցության

Գյոթե

Չայացքով կուզեի դիպչել

Քո ծերպերին

Ու գահավանդներին,

Եվ ամեն մի ատամնավոր ելունդ կոչել,

Ինչպես զավակներիս կանվանակոչել –

Անուններով

Չնչեղ:

Թխամաշկ տերն այս վայրերի՝

Իրիկունը,

Երկինքներից մոտդ իջավ,

Որ հանդիպի

Տանիքներիդ կակաչներին շիջող,

Եվ Չանգվի ջոերով, ընդմեջ իր մատների –

Վերասլաց երգեր կերտի...

Յակվում եմ ողկույզին, որ ծավալներ ունի հագին,

Լսում եմ, թե ձորում աղբյուրի ակն ինչպե՞ս

Անրջում է...

Առնչվում եմ քո խոսքի հնչանքին –

Անխուսափելի է մեր ուղիների

Կամրջումը:

Իսկություններիդ իմ առաջ հեշտ չես բացի,

Խուկի են քո շուրթերը կծծի...

Բայց հայցում եմ ինձնից քո անառիկ

Արարքների բռնագանձում, –

Ճակատագրի սանդղավանդներ

Ու լեռնացում...

(20)

Ինչպե՞ս սիրեմ,

Քեզ ո՞նց գուրգուրեմ ու զգամ,

Ո՞ր սահմանին մնամ արթուն...

Պուրպուր կակաչի պես

Դաշտում զևգա՛մ,
Լորի պես արտասվե՛մ
Տարեկանի արտում:
 Ձայնը խզած
 Յավքը
Մերթ վեր թռչում,
Մերթ գետնին է դիպչում...
 Քամին կոհակվում է,
Պարանոցը ձգած՝ կանչում,
Յետո հոսում-կորչում մթին կիրճում...
 Յողն է շնչում –
 Խաղաղություն հագին,
 Սև կողերը
 Ծանրահոծ են...
Ասեղնագործել են ասես մի գոմշացուլ –
 Յերկին,
 Յարթակարել են լռության
 Ձորձեր...

Ցանկանում եմ քո ընդերքում կուչ գալ,
 Չետեղվել ու հանգչել...
 Տևաբար ու
 Անկապտելի –
 Քո ներսին ներածել...
 Քո շեկ մամուռներիս
 Կառչել,
 Քո բռի մեջ
 Յալչել...

(21)

Երկի՛ր,
Իմ մտերիմ բարեկամս ես
Եվ իմ կապանքները...
Սիրում եմ քո բարձունքները,
Ձյուններն, առունները...

Սիրում եմ պաղ ու չոր
Օդի մաքուր,
Իմ ջերմ արյան
Ողջ սիրով կույր,
Որը ներառել է մոխիր,
հող
Ու Երկինք ...

Ջենց որ ձայն տաս `
Կարձագանքեմ. ուր էլ լինեմ՝ ձայնդ
Կհասնի իմ ունկին:

(22)

Եվ մարմանդ սերը
Սողանք է ճարում,
Ուր էլ որ գնամ –
Սիրտ է տոչորում...

Այլևս ուրիշ ի՞նչ կլավիսինի
Ջնչանք կհանի
Քո դաշտը կանաչ,

Փշատը, թուփը,
Աշունդ դեղին,
Երբ կուլաները թեքվեն քո հողին,
Կլկլա գինին... (23)

Այնտեղ,
Ուր քարերն են
Երգում –
Ես ինչպե՞ս չլավկվեմ: (24)

Հայաստան,
Քեզ հրաժեշտ տալ անկարող եմ,
Ինչպես ինձնից չեմ կարող բաժանվել...

Դու ինձ համար հիմի
Թե՛ ագռավ ես,
Թե՛ աղավնի,
Վրան, երկինք, հող ես,
Որտեղ Նոյն է
Հանգրվանել... (25)

Տաք հողի տակ երբ ես հանգչեմ –
Տապանաքար հարկավոր չէ...
Թող քո կանաչ կաղամախին

Վրաս լացի,
Իմ վրայով կոհակ-կոհակ
Թող մայի
Հոտը ոչխարի:
Ամռան օրով ես ունկ դնել կուզենայի
Առվի ընդհատ քքչոցին...

Լավ է: Երթամ: Ինձ կներեք,
Թող այս տեսիլքը չհատնի, –

Ձեզ եմ թողնում տիրույթներս,
Արարա՛տն իմ...

(26)

Թիթեռնիկի սման
Անձիր լուսաբացին
Բոժոժից դուրս կգամ:
Աչքերս կբանամ
Եվ կսթափվեմ...

Երկրին հակված
Աստղաբույլից իմ հեռագահ –
Թևով իմ երգեցիկ
Իմ օրերի հողին
Ես կհպվեմ ...

(28)

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

1

ԵՐԳԱՍԱՑՈՒԹՅԱՄԲ ԵՆ ԱՅՍՏԵՂ

ՍՈՃԻՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՄ

Իմ հովեկատնում

Յաճեղի ու զով է:

Կրետի բզզոցը նինջ է

Բերում կամաց...

Լուսամուտից՝ դաղձի բույրն է թովում,

Դիմացը՝ պստիկ մի հողամաս:

Յարևան տիկինն է հովանոցը բացել.

Նա հոգում է գույնի մասին դեմքի:

Փախչում է թխականը եռման ջրից ասես –

Մի կատու տեսնելով սանդղամուտքին:

Ամբողջ օրը պառկած

Կարդում –

Ուր որ է բանատողն իմ կշտկեմ

Կարգին...

Յետ եմ վարժվել՝ թե վեր թռչեմ արթուն –

Յենց որ ունկիս հասնի զիլ ծղրտոցը

Շչակի...

(31)

Դժվար եմ արթնանում

Առավոտով,

Շտապում գործ անել,

Յաջողության ետքից ընկնել:

Ինձ թվում է՝ ես կարող եմ

Ինչ-որ չափով արժեքավոր լինել,

Երբ հակվում եմ երազների
Իմ ջերմ այտով,
Երբ փորձում եմ կեսարթմանի –
Լույսը գրկել...

Եվ հարազատ տուն է թվում
Տիեզերքն էլ...

Մթնշաղն է իր լռությամբ
Շուրջս կենում...

Իմ այդ երազների՞ն եմ ես
Ապավինում...

(32)

Ամպերին ներհյուսվեց
Մշուշն անգույն:
Երկինքը գորշ դոնդող հագավ:
Առվակները հորձանք տվին
Գետի հանգույն:
Սակավամարդ շուկա:
Սդրցարանն է տարածում
Վնգստացող իր աղմուկը,
Ջեռաստանում թնդացնում ճիչ ու վեճ:
Անցնում ես –
Եվ թեփը թեթեն
Խոնավ ճիստվում է
Ոտնամաններիդ մեջ:

Ցանկապատին պարուրվել է պատատուկը...

Այստեղ անդամ են, գորշ
Օրերն անթարթ,
Բայց որ դիմագուրկ են –
Վատ չեն զգում...

Եվ սերմերն են հասունանում
Յանդարտ.
Չունեն նրանց փութացնելու
Ոչ մի հակում...

(33)

Ո՞նցն եմ սիրում օրն իմ,
Որ ծյուրում է անբիծ,
Սրտով, արյամբ,
Ողջ եռթյամբ սիրում եմ դեռ:
Ահա ցած եմ իջնում ցնորական
Չառիթափից,
Ոտք եմ դնում մարգագետնին
Ընտել:

Եվ նորից ինձ հետ են
Չավակներս , ինչպես առաջ,
Եվ նստել ենք հացի,
Նրանց համար ծիածանից
Պսակներ եմ հյուսել
Պես-պես...

Նորից աղոթում եմ ծանր լուսաբացին,

Որ նրանց պահպանի

Աստված ամենատես...

(34)

Ամռանը երբևէ

Մահվանն էիք հակվում –

Բարձր ու կանաչ

Խոտերի մեջ

Պառկած:

Արևի լույսով ձեր

Աչքերն էին փակվում:

Ծղրիդներն էին հնչեցնում

Ծնծղաներ

Դյուրական:

Հավքերն էին վերից

Ձեր վրա հեծեծում,

Թևաբախումներով

Օրհնանք բերում:

Ծաղիկները թախծոտ հայացքով

Ուղեկցում –

Նուրբ բույրերով էին

Ձեզ զարդարում:

Գետերն էին հեռուներից

Լալիս,

Հղկում քարերը ցայտքերով

Հոսանք-հոսանք:
Եվ մի կախարդական
Հոգեհանգիստ էր
Դաշտում լող տալիս –
Միախառնում էր սուգ
Ու գովասանք:

Քամի՞ն էր ձայն տալիս –
Այդ կապտալույս
Հեռաստանների ու արյան
Կանչով,
Թե՞ մեռնելով էիք
Դուք լողում դուրս –
Եվ ձեր
Պորտալարից
Ազատվում
Ի վերջո...

(35)

ՊԱՐՉԼԻՃ

Աստ լռությունն է գորտերի
Կռկռոցով պատած,
Շուրջբոլորը ոչ ոք չկա:
Բոլորակ ծառերը
Չունեն կատար,
Եղեգնուտն է ելևեջում –
Թախիծ հագած:

Այստեղ խոնավ է մշտապես

Ամեն շավիղ,

Երիցուկի սփյուռներն են

Թեթև:

Ջրում ձեռնափեր կան

Մեծ ջրաշուշանի,

Բռերի մեջ՝ ծաղկաթերթեր:

Այստեղ դուք չեք տեսնի

Խարույկի ծուխ քամահալած,

Խոտի զոլաշերտերն ասես

Ճանապարհ են դնում:

Սոճիներն են բանաստեղծում խոհակալած,

Եվ, անշտապ, տերևափշերն են

Գետնին ընկնում...

(36)

Կյանքն անցնում է,

Տարիներն են հերթով հանգչում,

Ավազի մեջ

Հոսում-կորչում...

Ես այնպես եմ տեսչում

Ձեռքով հափռել լեռներ,

Գիշերներ ու

Երկինք...

Նրանց համար նոր հեղուկի

Սկիհ կոփել,
Այդ հողուկը գինու, լույսի –
Ըմպել, ըմպել... (37)

Այս երկրի հետ չեմ ցանկանում
Բաժանմանս հաշտվել:

Ինչու՞ գնամ,
Ու՞ր եմ գնում:

Գազանն անգամ ինձ է ձգտում,
Ուզում է փաղաքշվել,
Իմ աստղն է
Թարթում երկնում...

Լուսաբացը լեռան հովիտն է
Ընդգրկել,
Չանց իր սիրտը՝ ինձ է պարզում:

Օ արեգակ
Ու մանկություն,
Կակաչներդ՝
Այլ ու բազում:

Իշամեղուն է տոթակեզ
Ճանր
Բզզում...

(38)

ՀԱՐԱՎԻ ԳԻՇԵՐԸ

ՃԱՔ ԿՏԱ

Հարավի գիշերը ճաք կտա,
Երկինքը՝ հանց հասած ձմերուկ:
Լուսինը՝ մակաշերտ սպիտակ:
Մի սիրտ է պառակտվում գիշերով, –
Արցունքի կոտորակ՝ ափերում...
Ու՛մ անքուն տրտմությունն է այնտեղ
Շվաքված նշմարվում լանջին:
Այն ո՞վ է, որ կիպ ու խաղաղ
Թևերով ձորին է փակչում:
Եվ այն ու՛մ ցավերի գայլուկն է
Լուսնի պաղ հայելում
Հանգչում:

Ու՛մ ձայնն է՝ սերտվածքով հաժում է –
Տաղտկալի կրկնությամբ հնչում,
Ասես մի թիակալ հյուճվում է,
Մոտինն աղոթքի է կանչում...
Ու՛մ երկար ձեռքերի հպումից են
Խոտերի ցողունները շրշում,
Եվ ձայներն այս ո՞վ է արթնացրել –
Տերևի խշխշոց ու շրշյուն:
Այն ո՞վ է, որ անապաշխար
Թավուտում երկնային պարտեզի
Կորցնում ու
Չի գտնում
Մի նշխար,
Կամ թաքույց մի որջ
Երագի...

(40)

Քառակուսի կարմիր տանիքներ կան
Կանաչների միջև...

Տես՝ գույներն այդ ինչ աններդաշնակ են:

Աքլորների աննպատակ կանչեր:
Դատարկ կարասը ծառին է հակվել...

Հարևանի պատին դիպավ արեգակը...

Ես իբր քնած եմ: Եվ իբր արթուն եմ:
Այդ ընդմեջ վիճակը
Կարելվույն չափ ձգելու հույս ունեմ, –

Օրը կիրակի է:

Ծեզը-ծեզին արշավելով կգան

Հովեկների աղմկարար

Ծանոթ ու բարեկամ:

Վտիտ գառ կմորթեն,

Թթու գինի կառնեն:

Չուռնի ձայնով սարը կթնդացնեն,

Կխրախճեն հեթանոսի նման,

Եվ կեղևին ծեր եղևնու

Կփորագրեն տառերն իրենց անվան:

Գիշերով հյուրերը հանկարծ

Կանհետանան,

Աստղային մի անդորր կիջնի գետնին:

Հովեկատներում դեռ երկար ժամանակ
Բանալիներն իրենց անցքերը չեն գտնի:

Դուրս գամ օդ շնչելու, ելնեմ կաճան...

Լուռ նայում եմ սոճիներն աստղերի
Մանրամաղ կրակին...

Չուր հույսեր տածեցինք:
Անտանելի ունայն անցավ –
Եվս մի կիրակի...

(41)

...Լուսաբացին եմ աղոթում,
Սարից իջնող քամուն,
Երբ աստղերը նշմարվում ու
Դեռ չեն հաչում...

Դեռ ցրտից կուչ եկած
Քնաթաթախ շները չեն հաչում:
Գիտեմ՝ ինչ է լուսաբացը.
Ակնարկ է սոսկ, սակայն –
Մի փութանցիկ փոխադրանկարի:
Բայց այդպիսի ծեփ մի ումպն անգամ
Հերիք է, որ իմ ճամփան երկարի:

Ճերմակ հագուստ:

Անտառ՝ բլուրն ի ցած,
Մառախուղը կլանում է
Հարևան տանիքներ...

Եվ կյանքն՝ ասես հրդեհ,
Սաղմոս է վեհապանծ,

Ձայնասահմանն առավել խստիվ է,
Բարձր ու ինքնեկ...

(42)

Մառախուղի խարույկներում
Մրսած լեռներ սարսռացին:
Ջուրը հագավ ծանր կապար:
Տարբաժանված
Ճանապարհները խամրեցին,
Փշավարդերը վառեցին բոցե մի պար...

Խոսքի կարոտը բաղձալի
Չէր հուշում, թե՛
Գրել արժեր...
Դեռ անձրևում էր ձանձրալի.
Իրիկնացավ,
Մութը խուժեց...

Հանց թափառիկ անձրևները –
Օրերն էին այնտեղ անցնում...

Ճյուղերն էին այգում ճոճում

Քամիները, –

Տերևաթափը

Փուրթացնում...

(43)

ԻՄ ԲԻՆԱԿՈՒՐՑ ԶԱՂԱՔՈՒՄ

Ջերմություն կա նոյեմբերին

Մեզ մոտ՝ Երևանում...

Իմ հինավուրց քաղաքում,
Որ երգեցիկ է ու շոգ է,
Նոր են այնքան
Թանգարաններն ու տները...

Ամբողջ օրը ջրվեժներն ու
Շատրվանները կասկադի –
Փառերգում են փողոցներում
Ճարտարապետ Թամանյանին,
Որի հուշարձանը
Նոփ-նոր են կանգնեցրել...

Ժողովուրդը,
Որ դարեր շարունակ զուրկ է եղել
Իր ծնած մեծերին
Պատիվ տալու
Իրավունքից,
Չիմա որքա՞ն պարտք ունի կուտակած, –
Որքան սգալու բան,
Որքան՝ քանդակելու,
Դեռ քանի՞ հոգի կա –
Խոցված իր անցյալից...

Իսկ առջևում –
Որքա՞ն ծնունդ,
Որքա՞ն փոփոխություն,
Եվ վայրկյան իսկ հանգիստ չունի

Ո՛չ անցյալում,

Ոչ գալիքում...

(46)

Երևան Է

Իմ մայրաքաղաքը –

Վերասլաց ծառս եկած

Ձիերի:

Ջուր խմելու թեքվեց

Արեգակը –

Ափի միջից

Ջրապարակների:

Իմ ունկերին օտար սմբակների

Վարդի ձայնն Է պատել...

Ջեսանված Է թրերիդ

Պողպատը...

(47)

Ջերմություն կա նոյեմբերին

Մեզ մոտ՝ Երևանում:

Շնչառությունը դարերի –

Ասֆալտն Է տաքացնում:

Տերևների եռաժանի,

Անդրիների գրանիտ...

Այնքան դժկամորեն անշտապ են

Շողերն այս քաղաքը լքում,

Մուֆ բիբերին հակվում է կիպ

Գիշերը վերահաս ...

(48)

Ի՞նչ անդորր է իջել վերից ...

Իմ քաղաքը

Քուն է մտել:

Ջեռվանց նեղլիկ լույս է նետել

Ինչ-որ մեկի լուսամուտը...

Ձյուն կա հագին

Պողոտայի...

Այդ ճեփ-ճերմակ սփռոցն է բաց,

Եվ տերևներն են ուշացած

Ժանեկազարդ դրոշմներով այն զարդարում:

Չի շնկշնկում կաղամախին,

Այլ նայում է, զմայլանքով հայացք հառում,

Թե ինչպես է լուսնի մանգաղը թափանցիկ

Ու դյուրաբեկ –

Քուլա-քուլա մուժ բուրվառում:

Այգում լքված նստարանի ստվերն աղոտ

Ասես թե ձյունն է շերտատել,

Որպես աշնան «մնաս բարով»:

Անգամ քամին

Ապաստան է գտել...

Եվ անդորր է իջել վերից...

Ինչպե՞ս ննջեմ, երբ անլուր է դրսի նիրհը...

Սսկվել է ամեն ինչ:

Միայն աստղերն են երկնքում

Լուռ քանդակում

Կաթնծիրը...

(49)

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ

Չրապարակը լայն ասես մակույկ լինի

Մի ձվածև,

Մոտենում եմ ժայռե վեհությանդ, որպես նեցուկ:

Տերևների ոսկով

Աշունն է իմ ետքով

Շավիղ բացում, –

Երկրային կեցության ողջ վաղանցիկության

Նշանն է այն դարձել...

Եվ օդի մեջ եղրևանու բույրը

Մեղմ հալչում է,

Չափեցնում է կուրծքս

Չետզիտե...

Կյանքն այլևս սկիզբ ու սահման

Չունի,

Իմ երկրային ճամփան

Անընդհատ է:

Թռչուններն են իջնում իմ ուսերին
Եվ ինչ-որ կառուցիկ ճովոյուն են

Հղում երկնին:

Կանխավայելում եմ

Պարզ ու բարդ ջանացման

Մի իրիկուն նորից,

Մեր հանապազօրյա հացին

Թող նմանվի երգն իմ:

Ավարտում եմ էջն առաջին:

Չգում եմ եռանդի

Երջանկաբեր աճը:

Ինձ էլ պետք չէ ոչինչ.

Ես երկնքում տեսնում եմ իմ

Ազատության հավքին,

Որին ոչ ոք

Չի նվաճել...

(50)

Երկու քաղաք,

Երկու իրավացիություն:

Ինձ վիճակված

Երկու բոցավառվող

Փայլատակում...

Ի՞նչ հոյակերտ շենքեր,

Էջը շուռ տաս –

Հյուղակներ կան թաքուն, –

Իմ Երևան:

Տարերջների գորեղություն – Մոսկվա:

Երկու ձգողություն:

Նրանց միջև հոգիս մի վախժորած

Թիթեռի պես պտտվում է,

Թե չնստի հանկարծ:

Երկու քաղաք:

Երկու անուն:

Իսկ վերևում

Ես եմ,

Որ ձեզ ասեմ.

«Ես կամ»:

(51)

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՍԱՆԴՂԱՎԱՆՂՆԵՐ

Ինձնից Արարքներ են բռնագանձում

Լեռների անառիկ

Ու սանդղավանդների

Ճակատագրի...

ՀԱՆՔԱՇԵՐՏԵՐՆ ԵՆ ՄԵՐԿԱՑԵԼ

...Տոչորվելով ծովի Է ծարավի

Լեռների ճերմակին տվող

Մանրախիճը...

Կարող եմ հայտնվել
Թևավոր ձիերի թափավազքում,
Երբ նրանց սանձ հագցնելն է

Անկարելի:

Բայց ես տեսնում եմ պարզորոշ հրամանքում –

Չունձքն անցյալ դարերի:

Այն շարժում է,

Ճնշման արդյունք:

Քար է՝ նետված

Մեր օրերի պատուհանին:

Նրա դիմաց, Տե՛ր, առաքիր

Խոնարհություն,

Իսկ թասիս մեջ թախիժ խառնիր ...

(54)

Չանքաշերտերն են մերկացել,

Ճերմակավուն մանրախճի,

Խեցեքարի...

Խուլ գվվոց են ունկին դարձել

Չեռու հուշերը օրերի...

Եվ շրթունքներն են քարեղեն

Չայոց լերանց՝ միշտ պապակել:

Ժլատ են ու կծծի եղել

Անձրւները, որ չեն եկել...

Ետ քաշվեցին, ծովերն անցան

Ու գնացին,

Այլ եզերքում որ խաղ ասեն

Ու երգ կանչեն:

Տոչորվելով՝ կարոտ չունեն

Ծովից բացի,

Լերկ լեռները

Մանրախիճե...

(55)

Ծովից-ծով Յայաստան...

Եվ հասնում է ունկիս

Դարերի շառաչը հաճախակի...

Առանց վիշտ ու կական

Մի թիզ հող չգտա

Քո, Յայաստան, գրանիտե մայրցամաքին...

Յողիդ՝ դարերից մնացած սպիներ կան, –

Խարազանի նշան –

Պաղած ամեն քարաշերտիդ...

Իմ ունկին է հասնում

Խոսքդ կանխագուշակ,

Ապրում եմ այդ ձայների մեջ անթիվ:

Քո զանգերի ղողանջներում,

Տաճարներում պատարագվող,

Ավերու՛մն էլ նրանց վեհությունն է մատնում, –
Եվ հառնել են տաճարների՝ անանձնական
 Լույսին հակվող...
Այստեղ հույսը նորից ապաստան է գտնում...

Ապրիլ, Իմ Հայաստան,
Քո սուրբ լեռան օրհնությունը վրադ,
 Լե՛ր ծովից-ծով, ինչպես
Դարեր առաջ ես ծփացել,
 Լե՛ր քո ոգով բոցե...

Կանգնած եմ քո դիմաց.
 Ա՛խ, շատ ես
 Փոքրացել,
Բայց հաղազս հավերժության
 Ինձ հետ խասք ես բացել...

(56)

Նինջ մտքը,
Հոգու լարեր խոնջացած,
 Չուր եք արթնացում
 Հուշերն անտերունչ:
Եվ ձեր ինչի՞ն է որք ու խեղճացած
 Ճահճուտի խորքից
Վեհանձն անցյալի վերհուշն
 Արթնացնել –
 Ադուտ լուսնյակի
 Փորձադաշտերում...

(57)

Յոսիր, Արաքս,
Իմ սիրո գետ,
Դու՛ ցավի հուն են դարչնագույն,
Յամառ բլուրների –
Կոշտուկներով փերթ-փերթ,
Ափերդ թեք են ափսեի հանգույն:

Յոսիր, Արաքս,
Տրտում խոհերս թող կորչեն:
Ասա, թե ձախորդությունը
Չքվի պիտի,
Թե գլաքարերդ
Աչառու չեն,
Եվ որ հնազանդ են
Իրենց բախտին...

Յոսիր, Արաքս,
Խոնարհումս տար օրերիս,
Զանգի, մեկ է, ողորմած են:
Թող օրերս ծաղկի բույրեր
Որթեն:
Թող բառերը գվարթ, թեթև
Պտույտ գործեն,
Եվ երջանիկ –
Մատաղ շուրթերը
Աղորթեն...

(58)

Այնտող, ուր իմ Հայաստանը
Ասես թե լեռնային ծաղիկ լինի հուշիկ,
Որի մասին միայն խեղդուկ տապի
Ճիրաններն են հոգում,
Իսկ ոտքի տակ
Միայն ժայռածերպ է
Ու ավազափոշի, –
Ի՞նչ արժե իմ սուգը,
Եվ իմ ցավն այլևս ի՞նչ է նշանակում...

(59)

Ես չգիտեմ
Ով է ավելի ողջ –
Երանգ-երանգ ու տոնական
մարդի՞կ այս վայրերի,
Թե՞ այս մթին լեռնաշխարհը:

Լեռներից տևական
Ու սլացիկ ենք մենք...

Ամենայն ինչ Տիեզերքի Օրենքների
Չափ ու կշռի ափի մեջ է դրված,
Լեռնալանջով դեպի ստորոտ են գլորվում
Տարիների գլուխները,
Լեռնապարն է կոկորդիս շուրջ
Օղակ կազմում,

Եվ խավարի Երախայրիքները

Իջնում են հոգուս մեջ...

(60)

Քնքշորեն,

Քնքշորեն,

Անխոս ու

Լուսառատ,

Որպես անծայրածիր

Կենաց մարգագետին –

Ես քո ճշմարտության

Ու փորձանքի առաջ,

Ինչպես հավերժության –

Ծառայի պես

Խոնարհվում եմ գետին...

(61)

2

ԵՍ ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ

ԱՅԼԵՎՍ

ՉԵՍ ՀԱՅՅՈՒՄ

Կշռաթաթին արդարադատության

Ես իմ ձեռքով

Կշռաքար եմ

Դնում...

ՏԵՍԻԼՔ

Անի

1

Ես փողոցով քայլում էի:

Հայաստանը՝ բոց ու ավեր...

Գալարվում էր, հաճում,

Հանց ծանր երագում...

Մանկան նման

Ուզում էր բղավել –

Ձեռքերն ինձ էր պարզում...

(63)

2

Իմ առջև էր իմ մայրաքաղաքը

Հնամենի:

Արյան պիսակներով նրա հեռաստանին

Հայացք էի հառել:

Մեռած մարմնից անկարող էր

Ծնունդ առնել,

Դաշտում հեղվել ջրի պես

Կենդանի,

Իր ան-եռությունը

Հաղթահարել...

(64)

3

Կանչիդ կարձագանքեմ –
Անեության մոխիրներից,
Բյուր հազար լարերով,
Որ ձգված են երկնի գահին
Ծառերից, թփերից
Ուղեշներից,
Շերտերից լավայի,

Ալեհերվող մթնշաղի
Փետուրներից...

(65)

*Հայոց մեծ եղեռնի
հիշատակին*

Հայ եմ:
Ցավով պիտի ասեմ,
Որ տասնհինգ թվին
Հոշոտել են ազգիս:
Խոշտանգել են, արյան
Բաղնիքներ են բացել,
Ողջ աշխարհն է այրժամ
Լուռ մնացել:

Ես չեմ կարող մոռանալ իմ պարտքը,
Կամ կտակել:

Հայ եմ:

Պիտի պնդեմ,

Որ մենք մարդ ենք եղել,

Եվ գազաններ՝ մեր դեմ:

Տիրոջ հավատքի մեջ

Մնացել ենք անտեր:

Փակվել են մեր առջև դռներ,

Նաև սրտեր...

Աշխարհը նայել է –

Գոցած աչքը դեղին:

Ոչ ոք չի հոգացել,

Թե հարվածը շեղի:

Արմատահան եղանք

Մեր հայրական հողից,

Անծիր անապատի փոշիներում լեղի

Չուր հածել են, հնչել

Մարտիրոսվող կանչեր:

Ողջ մնացածներիս ո՞վ է ներել:

Մեզ ո՞վ փնտրեց և ո՞վ գտավ:

Դու՛ էլ վերջիդ հասար,

Քսաներորդ դար:

Բայց դեռևս ո՞րք են հոգիները...

Եվ Թեմիսի փքուն դեմքին
Իմ ջահն եմ մոտեցնում, –
Սպանակներ, թալանչիներ բազում –
Նրա կուռքերը սրանք են...

Կշռաթաթին արդարադատության
Ես իմ ձեռքով
Կշռաքար եմ
Դնում –

Այլևս գթություն
Չե՛մ աղերսում:

(66-67)

*Պապիկիս՝ Գեորգի
Մելիք-Կարակոզովի հիշատակին*

Սևրի պայմանագիրն
Ու՞ր կորցրեցիք թաքուն,
Այն հիմա ի՞նչ
Փոշու տակ է:

Այսօր ազգիս արտասուքն եմ
Մենակ թափում
Եվ լսում եմ մեկի ձայնը.
«Հիշատակե՛ք»...

Խոսքեր աղաչական...

Բայց մենակ եմ,

Մենակ...

Շուրջբուրս

Տարածությունն իր շրջանի

Լրմանը չհանգավ...

Եվ միայն գիշեր է: Լռություն է համակ:

Ոչ մի շինծու ազատության,

«եղբայրության» կապանք

Չկա...

(68)

Ես այսօր ուզում եմ լինել ապերջանիկ

Այնտեղ,

Որտեղ հորիզոնին իջած մի գահ –

Լյառն է

Բիբլիական:

Լինել զվարթ կարմիր ժապավենով

Մի գառ,

Նոխազ լինել

Ձեր զոհասեղանին:

Որքա՞ն քաղցրություն է

Հոսում երակներով

Չոհի,

Որ հագեցնի ինչ-որ մեկի

Ամբարը սին,

Եվ նա ասի՝
Լեցուն ամբար ունեմ...
Անափ բերկրանքի մեջ
Լող եմ տալիս
Եվ խնդում եմ,
Գուցե ցնորվում եմ...

(70)

Դեմքս մի կողմ շրջած –
Աղացքարեր եմ պտտում:
Իրավացի ես,
Կյանք,
Բայց ես մեղավոր չեմ, –
Լուսադեմին կծածկի խոտը ճոխ
Ամենն, ինչ
Աստծուն է հաճո:

Նա կշռադատել է ամեն ինչ
Եվ մարմնավորել, –
Արյան հեղումի վայրը ցուցանել է ճիշտ.
Այնտեղ հետո խավոտ կանաչ կաճի...

Աստվա՛ծ, թե՛ մոռացար՝
Քիչ աթար խառնեիր հողիս հլու...
Հիմա ես ո՞նց եմ լինելու...

(71)

Կուզեի տուն գնալ,

Որտեղ մենության մեջ անապատի
Իմ ունկին ընտել է շրշունը փսփսում
Թերթվող մագաղաթի,
Եվ ես սև գծերի շշնջոցով –
Մոռացված զոհերի անուններն եմ լսում...

Որտեղ գավազան է դառնում
Ամեն մի սկիզբ Բիբլիական,
Եվ ոչ ոք հաշվի չի առնում –
Բարքիդ բախտը թե չբերի...
Մարտի ելած –
Ներածել եմ հողին, սակայն
Մի լեռնային հովազ է
Ջուր խմում
Իմ ափերից...

(72)

Խարույկը կնետեմ
Սևփետուր թռչունին, –
Ողջ-ողջ հրկիզման է
Հավքն այդ արժանի...

Ծանր է արթնանալ,
Մոռանալն՝ առավել,
Ո՞նց մեկուսանամ
Հիշողությունից:
Նրան օրոր կասեմ.
- Նանիկ արա, նանիկ...

(73)

ՍՈՒՄԳԱՅԻԹՆ ԱՅՐՈՒՄ Է ՍԻՐՏՍ ՊԱՐՍԱՎԱՆՔՈՎ

Արյունն անմեղների կողողի

Ողջ հարյուրամյակը

Եվ կհոսի փլատակված

Սրտիս միջով...

Օրը մոխրացավ:
Ինչ կար՝ հեռացավ:
Բայց սիրտս պտույտ է գալիս
Թռչնի պես –
Ի վերա ժայռի.
Թռչնաբույնն այնտեղ
Մխում է ծերպերում
Բոցակեզ...

(74)

ԱՐՑԱԽ

Այն եզերքում,
Չառիթափերն ուր ժեռուտ են
Ու խիստ կտրուկ,
Դու կանգուն ես –
Քիչ ճոճվելով, վերհիշելով
Ճռինչ հանող քամու մասին...

Մերթ թաթարներն են արշավում,
Մերթ հեծյալներ
Ու հորդաներ,
Մերթ հիշում ես սորումն
Արաբական
Կիզավառ ավազի...

.....

Սարալանջեր,
Կատարներ զառիթափ,
Քամու և փիրուզի
Երկնքե կանչ
Կապտակուտակ,
Արյուն՝ մարմարակերտ
Ձյուներում լայնարձակ...

Երախայրիք լույսի առաջնեկն ես
Ազատության օրորոցի,
Իմ հոգու պարսավանք,
Պատառ՝ մաքուր
Ցորեն հացի, –

Արցախ:

(76)

ՍՈՒՄԳԱՅԻԹ

Լավ ենք գրում: Ձերմանում ենք
Լույսի ներքո ճշմարտության
Արեգակի...
Սակայն կգա ժամը –
Բալենին կամքի
Չանգերի հնչումից,
Իսկությունը կսատակի,
Քանզի ճշմարտությունն այստեղ

Մի ծեղ անգամ չունի...

Արյունն անմեղների կողողի

Ողջ հարյուրամյակը

Եվ կհոսի փլատակված

Սրտիս միջով...

Սև սուգը կխանձարուրի

Բերանը մեր –

Կենաց ուղեխաչով...

(77)

Արձագանքը պառակտված է

Անսասան լեռների:

Ժամանակը բեկվեց,

Նախշերն իրենց հետքերը կորցրեցին:

Խոնարհվում են կատարները,

Եվ չկա փարատում,

Եվ ճերմակ է նրանց սուգը

Չաղագս գրիերի,

Որ մարտիրոսվեցին

Սրբազան Արցախում

Եվ կույր Սումգայիթում...

(78)

Ա. Գ. Գաբրիելյանցին

Եվ մերձենում է մեր հոգին

Բիրլիական ժամանակին:

Անհրաժեշտ է Ելից վիճակ,

Որպես ապաքինում:

Ազո կահ-կարասին

Հավաքում ենք

Առանց շտապելու,

Դառը տրտմության մեջ

Ծունր դնում

Մեր աշխարհի գեղեցկության հանդեպ,

Որը սիրելի է, սրբազան է

Եվ վերջինն է արդեն:

Աստծո նախասահմանումից

Մեր սիրտը կազատենք,

Մեր ընտրության մեջ ազատ ենք,

Ինչպես երբեք,

Այսուհետև...

Ուր արևը մայր է մտնում –

Այնտեղ է մեր ապաստանը:

Հիմա եկ ու զատվիր նախիրներից,

Շեղվիր շավիղներից,

Որ խառնիճադանջ են...

Ճամփաները, –

Թող որ փշոտ ու քարքարոտ, –

Բայց շրջան են գծում

Հայրենի տներից

Մինչև շեփորների

Հաղթականչը...

(79)

Ինչո՞ւ ենք սեղմվում
Խղճուկ ու անհրավ,
Ճամփեզրերին ծվարելն ենք
Հնուց անտի գնահատում:
Եվ ինչո՞ւ չենք ուղևորվում
Դեպի մեր բուն
Կացարանը,
Եվ օր-օրի Ռուբիկոնն է
Մեր ճամփան
Ընդհատում...

Ինչո՞ւ է այդքան քիչ զուրությունը
Ոչ,
Ոչ թե մեր հոգում,
Այլ ավերում մեր ձեռքերի –
Դեպի ակունք բահով
Ճանապարհ չես փորի...
Եվ մեր արյունն է Ղուրանին պաղել,
Այնպես է պնդացել –
Էլ չես քերի:

Եվ այս երաշտը,
Որ դառն է դաղձից,
Էլ չես հաղթահարի
Էլ չես գերազանցի...
Անգամ արցունք չկա մաքուր...
Ես մենակ եմ անապատում,

Հայաստան, քո
Դուստրն եմ կույր...

Բախտով ինձ վիճակված
Իմ կարոտը գնաց-Վանին հանգավ,
Ախթամարն է հնամենի
Չրույցներում
Կոծկվել, ասես հուշ վկայի...
Էլ չեն վերադառնա
Եղբայրներս թափառական...
Նախատինքով
Այրում ես սիրտս,
Սումգայիթ...

(80)

Աստղ Էր՝ հանգավ
Լույսը հույսի:
Այն, ինչ մերձ էր, կազմալուծվեց,
Ինչ հեռու էր՝ կորավ աչքից...
«Մնաս բարով» երկրին ասինք,
Էլ խոսք չկար ափսոսանքի...
Դեռ նրա նոր օրացույցը
Վազող տողով շուռ էր գալիս:
Նրա ետքից
Կույր ճամփեքին
Ահա, խանձող ենք կուլ տալիս...

(81)

Իմ կարիքը սև է գուլգե,
Ավելցունկի հոգս չեմ քաշում,
Այլ էականն եմ վկայում, –

Ինձ հարկավոր է
Չաց ու ջուր,
Ինձ լույս է պետք
Ապագայում...

(82)

Լեռնաշղթայից դեն –
Մի մայրամուտ վառված.
Չորիզոնի կառափին է
Արևը շիկանում...
Կապանքագերծ ու ազատագրված –
Չոզին վերաթռիչ
Ճախրում է,
Սլանում...

Որքան սիրելի է հոգու այդ վիճակը –
Չավասարակչիռ
Եվ արժանապատիվ...

Երկի՛ր իմ,
Նրան տուն վերադարձրու, –
Նա քեզ հետ միասին
Դեռ պետք է պտույտ գա
Եվ արտասուք թափի...

(83)

Ընծայվում է Հայաստանի ազգային
հերոս Ն. Ի. Ռիժկովին

4

ՄԱՀՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆ ԱՆԴԻՆ

Ես աղոթք կդարձնեմ
Խոսքը սրտիս միջի, –
Աստծուն կհասցնեմ
Միջով քար ու խճի...

ՄՊԻՏԱԿ

Ու՞ր եմ գնում խավարի մեջ

Սառույցներով –

Չեմ կռահել...

Սրտիս մեջ ցավ ու վիշտ բերող

Ի՞նչ տագնապ է աճում ահեղ:

Ի՞նչ թռչուններ են ճյուղերին,

Եվ նրանց խուլ ծվլոցում

Ու՞մ հուշն է, որ դեռ բանում է:

Եվ ավերակ քաղաքներում

Խափանումը ուռճանում է:

Երագի մեջ նախալեռան

Ծանր ու թաց ձյունն է խուժում:

Էլ մարդ չկա

Խնջույքների սեղանի շուրջ:

Ամենուրեք՝ բուք ու բորան,

Սառնամանիք է ուղղակի...

Թափթփվում են սև-սև ձյուներ

Ճերմակ գլխին Սպիտակի:

(85)

Հավերժության տարեգրքում

Գրանցվեց այդ օրը.

Այնքան լուռ էր

Եվ անդորր էր,

Ասես լույս էր կաթում...

Աղամանդե ձյունների մեջ

Արևն էր պեծկտում...

Ոչինչ աղետ չէր գուշակում...

Սակայն երկիրը ծառս եղավ

Ու խորտակեց

Ճակատագրեր,

Քաղաքներ ու

Կյանքեր...

Եվ կանգուն երկիրն իմ

Այս աշխարհի վրա

Երկիր չէր այլևս,

Այլ՝ ավերակ:

Ջանում էր վեր կենալ,

Թե՛ մեր կողմը նայի,

Կեցության հրեշտակն

Այնկողմնային:

(86)

Օրս օր չէ,

Եվ գիշերս չար է...

Կուզեի սթափվել,

Կուզեի վեր կենալ

Քեզ սատարել...

Բայց չգիտեմ –

Քեզ անդունդից ո՞նց հանեմ դուրս,

Ձեռքից բռնե՞մ,

Իմ վիրավոր ու կույր դուստր:

Փրկության կորն ինչպե՞ս գծեմ.

Ստորերկրյա աստիճանով

Քայլե՞մ գուցե...

Դու հոգևած ես...

Իմ դուստր ու մայր իմ սիրուն...

(Լեզուն սիրո

Ի՞նչ անպաշտպան է ու փխրուն...)

Շաղախները ճերմակ կրի –

Հանց ճգնված պատիճներ են՝

Բլուրներին:

Իրենց բնից ցած են թափվել

Թռչնաձագեր:

Եվ գիշերը քամահալած

Իր սեպերը բաց է արել

Ու վնգստում է անարգել:

(87)

Նորից փորձանք էր,

Վերստին փորձանք,

Փորձանք էր դարձյալ,
Որ պատահեցավ...

Ծեգին արթնացա –
Կողքիս էր արդեն...

Ոչ ոք չէր կանչել,
Բայց հայտնվեցավ...

Կողերն էր քսում
Նաշին անձանոթ.
Իրիկվա խորքում նրա սգերգը
Արձագանք գտավ...

Պտույտ էր գալիս
Ու հողի տակ էր կորչում
Կաճանով,
Քամին սուլում էր
Քերծերին մթար...

(88)

Ճանապարհին ընդլայնվեց
Ու ինչ-որ տեղ երկինք գնաց:
Այնտեղ անտառ չկար,
Չկար հող ու երկիր,
Ոչ քուն,
Ոչ հաց...

Ես ոտք դրի երկնի փետուրներին –

Եվ հետևեց

Արթնացումը...

Խզվածքը նոր կյանքի –

Մի վերք էր լայնաբաց,

Եվ երկրային հաստատությունը

Ցնցվում էր...

(89)

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Լուսնի լույսն են

Լակում

Սոված ու սպիտակ

Շները ձյուների:

Լռությունը

Երկնքի ծանրությամբ

Փլուզվում է սրտիս

Հորատանցքում..

Ես վառում եմ լույսը...

(90)

Եվ տարերքների ոգիներն էին –

Ճակատ-ճակատի բախվեցին մի օր,

Երբ ծառս էր լինում

Ստորերկյա մուկը,

Թե՛ փորձանք բերի...

Էլ թող չլինի

Երկրաշարժ մի նոր, –

Ա՛յլ աղետների իմ ժողովուրդը

Դեռ կհամբերի...

Մայրում Է ճերմակ մի գառնուկի պես

Օրն այս դողդոջուն,

Այն մի վախվորած մանկիկ Է ասես,

Սրտիս Է փակչում...

(91)

Բախտին գովերգել չեմ շտապում:

Սրտումս տիրող գորշ եղանակը

Ոչ ոք չի խախտի:

Ես ծանր արցունք եմ թափում

Հաղագս ազգիս սև բախտի,

Որ զոհը դարձավ

Թակարդի...

Եվ թաքտում Է, հանց ճերմակ թռչուն –

Փոխանակ Լույսը վկայեր...

Ու՛մ դիմեմ, երկինք,

Թե՛ Հայաստանը մոռացար կրկին,

Չես ուզում

Մեր կողմը նայել...

(92)

Հայաստան իմ, դիցուք –
Բարկ սանդուղք ես մանկուց,
Պատվար ես ու նեցուկ...

Ժամանակի
Սանդիկն գրանիտե –
Դու՛ երկու կուց
Սաթե...

(93)

Ես ամեն օր
Աղոթք կատեմ,
Որ քեզ պահի ու պահպանի
Աստված:
Ես արեգակ,
Թռչուն դառնալ կուզեմ,
Չեմ երկնչի –
Այս մարմինը
Մահվան ջրերի մեջ
Կներսուզեմ...

Օ, եթե ուժ լիներ
Վերածնման,
Դաժան բախտի
Հաղթահարման...

(94)

Արդեն ի զորու եմ բառը բառին դնել,

Լռությունը հավեց-գնաց:

Եվ աճում է բառը՝

«Լինել» -

Քո ավերակներում անհանգրվան:

Նրա ընծյուղն ամեն,

Տեր,

Պահպանիր –

Շնչառությանն ու

Ծաղկմանը վստահ...

Ու թեև քո ծաղիկն՝ արյան

Նշանն ունի,

Սակայն դեռ ողջ ես,

Հայաստան...

(95)

Հարկ է միայն կյանքով պայքարել

Մահվան դեմ:

Օ կյանք,

Դու սրբություն սրբոց...

Փոթորիկներ, մրրկասյուններ –

Հայրենիքս ավերել են, քանդել,

Փաթաթվել ու քամել,

Հանց վիշապօծ:

Մոլեգնությունը կույր՝ խոպոպի պես

Ես մի կողմ կտանեմ,

Հացի նման –

Աշխարհին կպարզեմ

Բարությունն անհատի...

Օ, եղբայրներ,

Ձեր ազատությունը հացի պես

Բաժանեք,

Թեկուզ մահվան գծից

Անցնեք անդին...

(96)

ՈՉ ԹԵ ԶՐԱՅԸ ԿԵՆՑԱՂԻ,
ԱՅԼ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵՔ...

Կույր է ցավն

Անցյալի –

Ուղեվար չէ...

Երկյուղում եմ,

Եվ գիտեմ,

Որ երկյուղում եմ...

Սակայն մեկ է՝ փորձում եմ ինձ կանչել,

Որ Հայրենիքիս հետ զրույց բացեմ

Իմ որջերի միջից:

Գիտեմ սկիզբը,

Բայց չգիտեմ վերջը:

Սակայն աշխարհն այնպիսին է,

Որ աշխատում հարկ է լինե՛ս:

Հարկ է՝ քեզ գիտակցես

Եվ դիմագիծդ ճանաչես...

Հայրենիքիդ համար պետք է

Իսկության լույսը գտանես,

Եվ ոչ թե խուլ այս որջերի միջից

Լույսի մասին

Բառերդ բարբաջես...

(98)

Ով երկիր իմ,

Դեռ ամառից-ամառ

Քո գունակը քանի՞ տարի

Ձգվի պիտի...

Քո եզները որոճում են

Խոտը ոտնատակի,
Լույսն է արդեն մարմրում
Պոետի...

Երկիր իմ, սթափվիր,
Որ քո կոտորակված
Երազը հավաքես...

Բացվիր,
Մեջքդ շտկիր –
Երկնից իջած շռայլ ձեռքի
Ժեստով:

Քեզ վստահի՛ր,
Հավատա՛ քեզ...

Կենաց ադամանդից
Բոցավառվիր մի նոր
Շերտանիստով...

(99)

Եվ որքա՛ն է հնարավոր ապրել
Առանց մահանալու,
Եվ չվերածնվել այնպես,
Ինչպես Աստված է պատվիրել,
Իրեն իր մեջ դեռ կրելով,
Պարտասպելով –
Բախվել կրկին

Վերջնեզերքին...

Կարելիությունը՝ ճկույթաչափ բան է,

Հողը՝ ափաչափ է:

Անուշադրի հանգույն թունդ արյանդ

Պիտի կառչես...

Ով հին ուրարտացի,

Քեզնից ու՞ր կփախչես:

Սակայն կույր է ցավն

Անցյալի –

Ուղեվար չէ:

(100)

Ինչ դժվար է,

Եթե պիտի

Վերաբնակեցնես

Քո անցյալը և քեզ...

Քո սանձերը ձգես –

Ծառս գաս:

Կեցությունը կենցաղի զրահով

Փոխարինես...

Սակայն գալիք էջիդ օղաթոկին

Խոնավ ցախլ էլ կհերիքի

Քո խարույկին...

Այնինչ ես գնում եմ
Վիհանդունդով դեպի
Իրագործումն հոգուս:

Պիտի ծեփվեմ կաճառին Տաճարի, –

Ի լայն տարածք,

Ի հոյս,

Ի լույս:

(101)

Ի՞նչ, հանուն ի՞նձ ապրեմ...

Դա ինձ համար

Ձանձրալի ու խորթ է եղել...

Յո դրա համար չե՞մ

Աշխարհ եկել:

Յո դրա համար չե՞

Ճակատագիրն ուղիս շեղել, –

Քանի՜ անգամ

Բերնով որսացել եմ օղն ու հեգել...

Թե՞ աշխարհը ծածկաքող է,

Տուփ է, պատյան,

Դեղապատիճ...

Այնտեղ սիրտը,

Կամքը,
Ռիսկը –
Անձիր են երևում:

Ես գնում եմ ետքից...

Թե՛ սարսափ եմ ապրում,
Թե՛ քաղցրությունս մի քիչ...

Իսկ ոտքիս տակ կենաց
Կամուրջն է երեքում...

(102)

Հարց եմ տալիս մթին
Լեռնաշխարհին,
Երբ իրիկամուտին
Չքանում է, ձուլվում
Խավարի բարձունքին.
Քամին ի՞նչ է սիրում,
Երբ գգվում է դաշտին, թփին, քարին,
Եվ երբ շոգը
Դադվում է թիկունքին:
Գետերն ի՞նչ են սիրում,
Երբ ծովին են տիրում
Իրենց վճիտ-ծփացող
Կապույտով:
Անտառն ի՞նչ է սիրում,

Երբ աճում է, փարթամանում:

Ծփալիս ինչո՞ւ են

Ալիքները կենդանանում փուլթով:

Եվ ես ի՞նչ եմ սիրում,

Երբ դողս տանում եմ

Աշխարհին լայնաբաց, –

Հագիվ բառեր հագած...

(103)

Լծափուկերը կտրատում –

Լծասարքը դեն եմ

Նետում...

Թող որ շուրջբոլորս

Լույսի նշույլ չկա...

Բայց գոյություն ունեմ:

Ես կա՛մ:

(104)

Ինչպիսին որ կամ,

Ինչպիսին լինեմ,

Այստեղ եմ, սակայն,

Կայանում, տևում –

Այս երկրագնդին,

Որ դեռ օրորում,

Բայց երերուն է մերթ-մերթ երևում.

Այնինչ թեքվում եմ

Դեղնած տետրակին,
Եվ հենց այն կյանքի,
Որով երբևէ
Ապրել եմ վաղուց,
Սակայն հակված եմ,
Այս ընթացումս ինչի էլ հանգի –
Մի նորոգ կյանքի...

Եվ իմ ճլորթին վեր է սուրալու...

Իսկ այնետղ՝ ոչ մի ճամփա ու կածան,
Ոչ մի ուղենիշ...
Երկնաճեղքերից թափվում են ծանր
Փաթիլներ ձյունի...

(105)

Երբ իմ երակների մեջ է
Ներթափանցում հոգևորությունը,
Երբ մարում է պոռթկումներիս
Չոսքը բոցե,
Ապա ինձ ասում եմ.
Քիչ ժամանակ ունեմ,
Բան չմնաց գուցե,
Բայց կուզեի գրել
Վերջին մի տքնությամբ –
Իմ երգը հաղագս
Չամբ տարածության...

(106)

Ազատի՛ր ամենն, ինչ
Ազատությամբ լի է,
Փորձի՛ր ռիթմ, ժեստ, շարժում –
Ամեն ինչ ազատել:
Տիեզերքն՝ աշխարհ է,
Տիրույթները՝ անընդգրկելի են,
Ոչ ոք այք չի նետի
Սահմանից դեն...

Նա ինչ-որ երջանիկ
Նշաններ է հուշում,
Կույր դիմագծերն են
Տեսնում մահի...

Բայց երբ ճակատս հակում են
Թղթիս մոխրափոշուն,
Արգասիքը ազատության –
Հալածվում է
Վիհերում ամայի...

(107)

6

ՍԱՐՏԱՅՐԱՎԵՐ ՆԵՏԻՐ ԲԱՐՁՈՒՆՔԻՆ

Դառնամ պիտի

Հայրենի օդ...

Շտապում եմ...

Ես տիեզերք

Պիտի դառնամ...

Դառնամ պիտի

Հայրենի օդ...

Հողը մաքրեմ ու լվանամ

Գետով փրփրաճերմակ,

Նարնջագույն փայլեմ քո մեջ,

Նարո՛տ...

Ես կյանք պիտի դառնամ –

Անփուտ ու տաք,

Լռությունը ծանեմ –

Խնձորի պես

Կեսերի բաժանեմ...

(109)

Ես ծաղկել եմ ավերի մեջ հեռավոր դարերի,

Պատմության փուլերում՝ կայծքար հազած,

Հոգումս մի բուռ եմ պահել

Սրբազան բառերի, –

Ահա դաշտը, ահա սիրտս

Փախստական...

Ես խաղողի որթ եմ հասուն,

Արյուն՝ հոսուն...

Հիշողությունս ավելի վիթխարի է,
Զան թե հոշը՝ կոծկված հողում...

Ռուսիո հետ միության մեջ

Կայացել եմ կրկին...

Ես՝ փշերի միջից ծլած

Ցողուն...

Իմ բաձրագույն ու ամենահամառ

Հավատամքն է-

Կյանքը:

Արև եմ, շոգ ամառ,

Որ տապի է հանգում...

Համառորեն աճող

Իմ ծիլերն են շողում

Լեռնաշխարհի քարերի մեջ

Թանաքագույն...

(110)

Ամբողջ կրքով

Իմ այսօրվա օրն եմ

Բնակելի դարձնում:

Նրա ավազները,

Կավն ու գրանիտը

Իմն են արդեն...

«Հայրենիք» բառի մեջ
Ինձ եմ գտնում –
Մանր-մուկ, ունայն
Դառնություններից դեն...

Եվ «Հայրենիք» բառը իմ վահանին –
Պարզում եմ վեր,
Հպարտությամբ լցվում,
Այլևս շտկվել ու խորշում եմ
Կուզիկության բարքից...

Լոկ նրա տքնության
Առեղին եմ լծվում , –

Օգնի՛ր՝
Հաղթահարենք,
Մեզ փորձարկի՛ր... (111)

Ձանք թափիր, ջանացիր քո ջանքով...

Վ. Բոյունով

Ձանք թափիր, ջանացիր քո ջանքով,
Մինչև լույս արտասվիր
Ու խնդա...
Լույս-ծեգին ցերեկվա հոգսը քո
Քո ջանքը
Մոռանալ կտա...

Եվ քո ջանքը կարծես կթաքչի –
Խորախոր որջերում կկորչի...

Բայց դու մի՛ տրտնջա,
Ե՛տ նայիր, –

Նախշերում տարիներն են հյուսում

Ամեն ջանք,
Եվ նախշերն են հյուսվում –
Դառնում կյանք...

(112)

Պարույր Սևակին

Սեպ է խրված արդեն.
Բաժանարար վիհը
Երկրաշխարհի և քո միջև -
Խորանում է:
Եվ շարունակվում է երկրի
Բոլորապտույտը,
Եվ դու վաղնջական կավից
Խորթանում ես...

Կանգ առ, Պոետ,
Մի ակնթարթ գտանք,
Որ քեզ կտանք,
Երբ վրա չի հասել պառակտումը,

Կայենը դեռևս չի սպանել,
Չի համբուրել Յուդան, –
Կերտիր, Պոետ,
Այդ կուսական ակնթարթը ծանիր –
Եվ մի վերջին անգամ
Ստեղծանիր...

(113)

Այնտեղ է արևը հուռթի,
Ուր՝ ապոգեյը...

Այդ բարձունքը
Շորթիր,
Օ երկիր իմ,
Իմ Գեյա...

Ուղեծիրն է ի ցած –
Քո ջանքի...

Բայց մեկ է –
Փորձ արա
Ու գորիր,
Վեր հակվիր
Ու ձգվիր
Խավարի, անկուսի
Անդունդից...

Վիհի մեջ

Մի՛ փրկվիր:

Թող սիրտդ ածխացած

Երկնի խորքը սուզվի...

Կգտնե՞ս քո ապոգեյը...

Արտասվում եմ, երկիր իմ,

Իմ Գեյա...

(114)

ԹԱԽԾԱԼԻ ԱՄԵՆ ԻՆՉ՝ ՀԱՂԹԱՀԱՐՎԱԾ Է

Եվ երբ ցնցվի երկրագունդը,
Կհավասարակշռի նրան
Գմբեթը տաճարի...

Թախծալի ամեն ինչ –

Հաղթահարված է:

Աշխարհում լույս ունեմ

Կրկին:

Եվ էջը վերստին բաց է

Կյանքի,

Ուր իշխում է թևը

Ոգու,

Հաղթական քաջության,

Որ սրտեր է վառել

Հիմի...

Անցյալի կործանիչ

Նշանները

Սրբում է դեմքիցս

Քամին...

(116)

Հայրենի՛ք,

Ծանր ժամերին ես քեզ եմ

Կանչում:

Եվ քանի՜ հազար տարի է –

Քեզ հետ ապրում եմ, ես կամ...

Քո լսողությամբ ունկ դնել,

Քո տեսողությամբ

Նայել եմ տեսչում,

Հոսում է իմ միջով

Քո լույսը –
Անմար ու նվիրական...

Հայրենի՛ք,
Իշխանությունդ անմեկնելի է ...

Աճելով հոգուս ես

Ներաճում...

Եվ գուցե բլուրից անդին

Քո մուգ կապույտում

Տեսանելի եմ, –

Աստղալույսի տակ

Մասրաթուփի եմ ալ ու ճոճուն...

Եվ քեզ ուրիշով չեն փոխի,

Ինչպես սավանդ

Լկացքատանը:

Չեն փոխարինի...

Ոչ մի խավարի

Խորքում չեն թաղի...

Ես՝ դու՛ եմ:

Մեր քայքայը նույնն է...

Հայրենի՛ք,

Իմ բերդն ես անառիկ,

Ես՝ քո սև գրանիտում

Գիշերով ծիլ տված

Ճաղիկ...

(117)

Լու՛ն կացեք...

Նստել եմ ծալպատիկ

Ու գիրք եմ թերթում...

Էջերն են

Թույլ շրշում կարոտից...

Լեռների, օվկիանի,

Մաքրաձայն սրնգի

Իմ գիրքն եմ կարդում –

Սա գիրքն է ճերմակ գառների

Ու կանաչ արոտի...

Դեղնած են թերթերը,

Լուսատունն հոգևած ու ծարավ –

Մի վերջին շող բերեց...

Գիրքը երկնքի

Դրեցի ամպի դարակին,

Իսկ ամպը հավլեց ու կորավ,

Եվ սինջը լուռ փակեց

Կոպերս...

(118)

Արթնանում եմ –

Թռչուններն են ծվլոցը գցել.

Ի՞նչ վաղ են արթնացել:

Էհ, լույս բարի:

Փողոցներով մարդիկ

Բեռ են տանում.

Տես՝ շուկա քարշ տվին

Մի ոչխարի:

Եվ մեքենաներն են շրշուն հանում:

Զգվում է ասֆալտը բաց-մոխրագույն,

Մինչև դարուկոսը ընթացքը ընդհատի...

Ինքնաթիռս երեկ

Հայրական տուն թռավ-եկավ

Ու քիթը դիպցրեց

Ստորոտին Արարատի...

(119)

Սա վայրն է իմ սիրո,

Վայրն է ջանացումի:

Բառերը ծնվում են

Հատիկ-հատիկ...

Մահվան սև մուրն այստեղ

Իշխանությունն չունի,

Աչքերիս

Չի պատի...

(120)

Ահա և նրանք – լույսի դարպասները –

Գառնի,

Ափիդ միջից երկինք թռչող

Թիթեռ –

Չռիփսիմեի տաճար:

Արյան ծարավ չի ունեցել

Չայաստանը երբևիցե

Եվ իր կիրքը հագեցրել է

Սիրով, ստեղծանունով...

Եվ նրա պատմության կաթո՛ղ

Ես սևվել ու միավորվել եմ

Աշխարհին...

Էջմիածնի մայր տաճարի

Գմբեթ նարնջագույն,

Լույս՝ իջանած իմ հոգու մեջ,

Երբեք,

Ոչինչ

Այն չի մարի...

Եվ երբ ցնցվի երկրագունդը,

Կհավասարակշռի նրան

Գմբեթը տաճարի...

(121)

8

ԻՄ ԼՈՌԻ

Քոնն եմ, ինձ մշակիր,
Իբրև վարելահող,
Լոռի՛...

Երախտապարտ եմ աշխարհին,

Որ ինձ խոսք շնորհեց –

Ինչ տեսնում ես,

Սիրտ,

Վերածիր բառի:

Ոլոր-մոլոր ճամփեք...

Վերստին ու նորից

Ասում եմ.

«Իմ Լոռի՛»:

Վեր եք ձգվում, լեռներ,–

Այնտեղ է լույսն իմ կարոտի...

Լայնաթիկունք դյուցազուններ –

Նման լեռի...

Թույլ տուր՝ ջուրը խմեն

Քո Դեբետի,

Լոռի՛:

Թե ինչ-որ բան այն չէ –

Ներող եղիր...

Արյանս մեջ հնչեց

Քո «խորհուրդը խորին»:

Ինձ՝ տեսքով օտարիս,
Քո անդունդին ու սլացքին
Չամատեղիր,
Լռի՛...

Ի՞նչ պոռթկուն է կամքը քո անհողողոյ...
Չաղպատում աղոթքս թող չլռի...

Քոնն եմ, ինձ մշակիր,
Իբրև վարելահող,
Լռի՛...

(123)

Ինձ՝
Խոնարհիս, Լռակյացիս,
Տու՛ր, Չայրենիք,
Վարելիհող...
Ես մշակ եմ –
Կմշակեմ...
Եվ քեզ,
Որպես տեղատարափ,
Իմ մեջ կկլանեմ
Ես՝ պապակ ու ծարավ.
Ցամաքել չեմ կարող,
Սպառվել չեմ կարող,
Ես՝ անդադրում –
Սակայն ճամփես փակող
Ծառ չեմ կտրում...

Լոկ քո կենաց գիրքն եմ

Բացել զգույշ

Ու երբեք չեմ փակում,

Եվ իմ հույսն եմ արևով

Քանդակում...

(124)

Ահա սիրտս բացած –

Ողջ աշխարհը պարփակեցի...

Արև, գարուն, բացատ,

Ճանապարհ ու

Եկեղեցի:

Ոչխարների հոտի համար –

Բյուր արոտավայրեր,

Այն ամենն, ինչ կտակել է

(Իր ողջ կյանքով)

Հայրս:

Ամենն, ինչով օժտել է ինձ

Ու վկայել

Մայրս:

Այն ամենն, ինչ հարկ է պահել,

Ոչ թե կորցնել կամ ընծայել...

Ես վերստին ձեռք է բերվում

Չորեղութունն իմ կրքերի,

Որ չլինեմ նրանց գերի...

Ոտքերիս տակ են սփռվում

Յովիտները զավակներիս

Ճակատագրի ...

(125)

Խոսքիս անդաստանը նորից փխրունացավ,

Եվ քամին է իմ հերկերը փորում...

Իմ հանդեպ բարեգութ՝ աստվածները դարձան –

Ես արևի բեկորով եմ գրում:

Գունաբոց է շաղում ջրերի մեջ կապույտ

Ծիածանը՝ մաքուր լուսաշերտից...

Գեղջկուհին անկտին դեռ ճոճում է անփույթ,

Ինչպես որ արել է հնուց անտի,

Արևադարձային թռչուններն են դայլայլ հղում,

Երկրագունդն է Կաթնծիրում

Լողում...

Յավաստի ու հնարովի եղած ու չեղածում

Գրիչը երգում է,

Խնդում, լացում...

(126)

Ինձ կյանք է ընծայված,

Որ նրա բարկոյին

Յամոտեսողը նույնպես դառնամ,

Որ ամոքվի

Սիրտս

Բանիվ Արարողի,

Եվ բարեկամներս

Վերադառնան...

Լայնաբաց քնքշությամբ

Նրանց սիրելի հարկ է,

Խարխուլ տանս –

Երկրի գվկոցն եմ

Ներառել...

Իմ ձեռքերում ահա

Սիրո դրոշակ է,

Անտառեզրին մի թիթեռ է

Ճերմակ գույնն իր վառել...

Եվ այդ բերկրանքն

Անհնար է

Սանձահարել...

(127)

Չավատում եմ , որ

Կլինեմ՝ կասեմ:

Ես կամ:

Անհնարին է,

Թե՛ ոչնչանամ:

Ողորմածության նոր ավետիս եմ,

Թևավոր թռչուն մարգարեական...

Նայեք –

Թևերս ծանր են ծափ տալիս,
Բերում են, սակայն, ավետիս...
Քանզի ցմբուր խմել եմ արդեն
Ես ձեզ մոտ գալիս –
Դառնահամ բաժակն աղետիս...

Թեև աղետը
«Դու»-ով է խոսում,
Բայց մեջքը
Կռանա պիտի...

Իմ մահկանացու դիմագծերն են
Վաղուց քանակված
Եվ անմահ ձեռագիրն
Իմ սրտի...

(128)

Առաջին ջուրակ չեմ այստեղ թեկուզ,
Բայց իմ միջով ծովն է շառաչում ու հնչում:
Մի ճուլակտոր եմ չմանրվող ոսկու,
Քարի, գետի մեջ եմ, քամու կանչում...
Թող որ գետերն հոսեն անդառնալի.
Այս բերկրանքը թողած՝ ես ու՞ր գնամ:
Դո՞ւտ լինել այս տարաբախտ դարում
Փորձանքով լի –
Ասել է թե՛ հարկ է այդ կոչմանը
Արժանանալ...

Տո՛ղ,
Սավառնիր –
Ճաշակելով ցնորք ու ցավ,
Ոստերում զրնգա սառցե այգու:
Շուտ, աչքերդ փակի՛ր. –
Կամքիդ աստղերը ի՞նչ պայծառ դարձան:
Ձիերն են, քամու պես, ազատ դաշտով վարգում –
Կոխկրտում են, ճգմում ամեն փորձանք: (129)

Հոգուս –
Վեր պարզած ձեռքերից –
Վերին աշխարհն է սպասում...
Նևջող գիշերը թմբերից
Դեպի արտերն է զառիվայր –
Մարմանդ հոսում...
Դաշտում ծփում են ցողուններ հասուն,
Խշշում է աշորան լուսնատակի...

Աղմկում է,
Լռում է,
Փսփսում,
Եվ սպասում է
Արևածագին... (130)

Երախտապարտ եմ դարերին,

Որ ուժ տվին

Ինձ՝ դիմակայելու

Ստին ու փտումին:

Որ հետագիծ թողեց

Ջանքս,

Չուր չհոսեց

Կյանքս...

Որ չափազանց դժվար ուղիս

Չխոտորվեց ո՛չ կրքերից,

Ո՛չ փորձանքից...

Որ երբեք չկորցրի

Աստծուն, –

Որ Աստված իմ մեջ էր

Ժամին

Թե՛ տրտմության

Եվ թե՛ հաղթանակի...

(131)

Կննջեմ քո ուսին,

Արագա՛ծ պարմանի,

Որ ճերմակ փայլածող

Վարսեր ունի:

Արծաթագոծ գլխով –

Ո՛չ մանուկ ես,

Ո՛չ ծերունի...

Իսկ լեռնաշարքերը
Քո համեմատ՝ չնչին
Մանկական նկարի
Թզուկներ են հիմի...

Գայի ու գտնեի
Քեզ մոտ հանգիստ վերջին.
Իսկ ոտնամաններս
Կթողնեի շեմին...

(132)

(Այսուհետև շարունակ եմ (փոքրիկ շտկումներով) «Գարուն»-ի 2010, 9-10 համարում զետեղված թարգմանություններս, որ այս գրքում չկային, և վերջում՝ «Հայաստանն այսօր» բանաստեղծությունը, որն առանձին վերջերս ինձ էր ուղարկել տիկին Վերմիշևան):

Եկել է ժամը խոսելու,
Ժամն է, երբ բոքիկ մնացիր:
Ժամն է սուզվելու պաղպաջուն ջրերում
Բառի, –
Եղել ես, չես եղել –

Իրականացիր:

Փեշդ բարձրացրու –
Գնա...

Մոմն է կիսահալ՝ մարել շտապել...

Սուրսայր է քամին,

Հանց դանակ...

Ցուրտ է:

Մթոտ է:

Տապ է...

Հիմա ինձ հաճախ ես այցելում, լա՛ց:

Որքան ցուրտ է, Աստվա՛ծ:

Ինչ սրսփուն տերևներ են

Պառկած

Հին մայթերի տեղում...

Երակաճյուղերը մաշկի ներքո

Որքան լուռ են,

Որքան խոնավ,

Որքան դառն են

Դողում...

Փոխարկումը դարաշրջանների –

Ասես երթ է սգո...

Փլուզվող Կեցություն,

Պահնորդի հերթափոխ...

Եվ չի լսվում շուրջբոլորս

Անգամ մի շան կաղկանձ,

Որի հետ միասին անցնող դարը

Ողբամ...

Հույսի մոխրափոշով

Աճյունասափորն է շիրմափոսին հասել:

Եվ արևը լքում-հեռանում է

Օտար եզերք:

Ոչ մի բանի համար չեմ ավստում:

Լինելիքն է

Եղել...

Թռավ ու էլ չկա –

Ասես քամին անկապ

Խոսք էր ասում...

Լոկ հուշն է եռեփվում:

Լոկ հուշն է, որ

Դեռևս չի պաղել...

Բայց այդ վերհուշի հետ

Ինչպե՞ս կենամ,

Միտքս ո՞նց պահպանեմ –

Նվաղ ու սուղ...

Յու. Գ. Ծիշիանային

Մենք այդուհանդերձ կորցրինք

Բոլորին –

Արժանացնելով

Ամենավերջին

Մի հրաժեշտի:

Եվ, հանց նախկինում,

Սկզբի մեջ եւք գտնվում նորից

Սավառնող երկրի շրջապտույտի:

Հարկ է վերստին

Մարմինն ու հոգին մեկտեղ կուտակել, –

Հարթավայրերի, հովիտների ու

Հեռաստանների

Ամայասփյուռ

Կնիքը քակել:

Եվ ընդմեջ մեղսոտ

Դարաշրջանի,

Որ հնչեցնում է

Իր թնայունը խուլ,

Ձեզ գուցե ի մի կբերենք, աղե

Փշրանքներ ծովի,

Անապատային

Փուշ ու սաքսաուլ:

Լողալ

Բաժանման վարարման միջով,

Քանի դեռ դեմքիդ

Չեն դիպչի –

Ձեռքերը լքյալ արարածների,

Նաև՝ ջերմ ձեռքերն

Արարչի...

Երբ ուժ չունեմ, որ սավառնեմ,

Նորից առնեմ թևեր,

Երբ թվում է –

Արդեն ապրելն է իմ

Ուժերից վեր,

Երբ բոլոր դռներն ու դարպասներն

Իմ դիմաց

Խաչփաչ փակ են –

Ինձ համոզում եմ, թե

Յետևակ եմ...

Դիմացս խրուսն ու

Ճահճուսն են մնացել...

Սակայն մեկ է –

Դրանք նույնպես կանցնեմ

Երբևիցե...

Վայրենի է ժամանակը կայտառ.

Ետևից չես հասնի մտրակովդ անգամ...

Ինձ խոնջացած գտա,

Թե՛ մոտենամ ու կռիվ տամ...

Պատնեշ դառնամ եզրին

Չառիթափի...

Բայց ի՞նչ ասել կուզե.

Արտասովոր՞մ ես,
Աստված,
Գուցե ի՞նձ ես խղճում.
Թե՞ վիրավոր որս եմ,
Թևամուրի թռչուն,
Որ անգոր է թռչել...

Ահա օրը պայծառ,
Որպես վերջին
Կայծակ:

Մա՛հն անգամ –
Սահման չէ...

Ջուրը հոսում
Եվ հղկում է քարը:
Բայց քարից էլ
Ամուր եմ ու առանձնակի:
Դուռ-լուսամուտ չկա,
Պատ ու փեղկեր
Փակի:

Ո՛չ ցանկապատ,
Ո՛չ տուն, ո՛չ էլ ամրոց...

Սակայն կա ճանապարհ:
Ուղի:

Եվ բոց: –

Մեծ նշան

Կրակի...

Կա Կիրակի~...

Ով որ ստի դեմ կռվելով զոհվի –

Մահվան չի հանգի,

Եթե իր ուղուց չի շեղվել

Արդեն:

Մահվան հեղուկը նա կըմպի

Չանգիստ,

Դատարկ բաժակը մի կողմ կտանի –

Իր շուրթերից դեն:

Ափերում առած կրակի բոցը –

Նա կայրի իրեն ի Փառս գուցե...

Չաղթական ձիեր

Կըոստնեն մեկից:

Եվ Մեսիան կիջնի

Երկնքից...

Ես դեռևս կամ: Լինելու եմ դեռ:

Ու թեև արդեն

Իմ իրիկունն է անցնում ի գիշեր,
Ի երկուշաբթի՝ վերջին կիրակին,
Եվ բնահողիս կավն էլ է մաշվել,
Սակայն կարող է նորեն հղացվել
Շանթ ու կայծակից, բոց ու կրակից,
Որ անկրկնելի տարերքն է հեղում:

Իմ օրհնությունը նրա՞ն եմ հղում...

Կույր աչաց մեջ եմ նայում բաղձալի,
Քամին բացել է թևերը կրկին...
Նորից ցերեկներ, գիշերներ էլի,
Դարձյալ՝ հեռասատն, վերստին՝ երկինք:

Ժամանակն է, որ ի անհայտություն
Չափեմ ընթացքս.
Գուցե կհասնեմ ժեռ կածաններով
Դատ-դատաստանի կառափին...

Անհուն քնքշանքը
Կբացի աչքը,

Մի խռովահույզ աստղ երկնքից
Կայծն իր կառաքի...

...Սակայն այս երկրից

Չեմ բաժանվելու:

Ինչու՞ հեռանամ:

Էլ ու՞ր եմ գնում:

Գազանն է մոտս գալիս

Շոյվելու,

Աստղն է փայլում թավջանուրբ

Երկնում...

Ահա իմ կողմն է իր սիրտը մեկնում

Լեռնահովիտը, որին իր գրկում

Ճեզը պարփակեց...

Օ դուք, խաշխաշներ –

Կակաչ ու լալա,

Արև,

Մանկություն,

Կրետի թանձր

Բզզոց

Տոթակեզ...

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՅՍՕՐ

Այստղ ելընթացիդ տեղն անգամ կխառնես,

Որտեղի՞ց թափ առնես:

Մուժի ետքից չի երևում հեռաստանը:

Սպարտա չէ, ցավոք, Յայաստանը:

Այս երկիրն ա՛յլ մի խորհուրդ է հագել:

Այստեղ ամեն համբակ

Արժեք է ստացել,

Անպատկառ ամեն ոք – վեհապանձ է:

Այստեղ շատերը կան –

Կախելու ապրանք են:

Ձյան շերտի տակ՝ միտքն է կորում,

Ոչ մի բանի մասնի

Այստեղ ամբոխը լեզու է քորում,

Իսկ չարչին գոռոզ է՝ փարավոնի հանգույն...

Յրագդանն է հոսում: Եվ Լյառը հանդիման –

Յայացքների դեմն առել է հնուց անտի...

Դավիթը թուրն առած –

Դեսուդեն է վարգում,

Բայց թե ու՛ր՝ չգիտի:

Թարգմ.՝ Յրաչյա Բեյլեռյան

Դմիտրի Մուլֆակսի

(գրախոսությունից)

Սեդա Վերմիշևայի ռուսերեն բանաստեղծությունները ծնվել են երկու մշակույթների խաչուղում: Պատահական չէ նրա հղումը Ալեքսանդր Բլոկին, պատահական չէ նրա պոեզիայում ռուսական բանաստեղծական դպրոցի հատկանշական գծերի առկայությունը:

Եվ նրանցում սեր կա ու հավատ հարազատ Հայաստանի հանդեպ, հավաստումը կա այն բանի, ինչը, այնուամենայնիվ, էականն է Սեդա Վերմիշևայի բանաստեղծություններում. «Քանի շնչում եմ, // Քանի դեռ ես կամ, // Տարածությունն է քանի դեռ իմ մեջ // Չրնգում – // Քոնն եմ, քեզ եմ ծառայում...»:

Եվգենի Վինոկուրով

(գրախոսությունից)

Բանաստեղծ Սեդա Վերմիշևայի համար գլխավորը Հայրենիքի թեման է: Բայց գուցե ակադեմիական «թեմա» բառը տվյալ դեպքում հարմար չի գալիս, քանզի Հայրենիքը Վերմիշևայի հենց կյանքն է, կենսաց իմաստը, բերկրանքն ու հպարտությունը...

Ազգային պատմությունը, ավանդույթները որոշարկում են Վերմիշևայի քնարական հերոսուհու բնույթը, պայմանավորում նրա այնպիսի հատկանիշները, որպիսիք են զսպվածությունը, քչախոսությունը, հաստատակամությունը: Բառային ձեռնածությունը նրան չի գրավում: Նրա ամեն մի պատկերը նախ և առաջ ճշգրիտ է, թեև միաժամանակ՝ անսպասելի: (134)

Սեդա Վերմիշևայի պոեզիայում միշտ առկա է պատասխանատվության զգացումը, հատկապես՝ հայրենի հողի հանդեպ: Եվ նա տալիս է, վերադարձնում է իր պարտքը նորից ու կրկին, և, միգուցե, որևէ մեկից առավել ծանրակշռորեն: Եվ տա Աստված, որ մեզանում միայն հայերեն ամեն մի գրողի ու խոսողի մեջ նույնքան հայեցիություն լինի, որքան կա Սեդա Վերմիշևայի մեջ:

Ես խորապես հարգում եմ Սեդա Վերմիշևային, հարգում եմ պոեզիային ու Հայաստանին նվիրվածությունը պահպանելու նրա կարողությանը:

Երջանիկ եմ, որ մեզանում կա մի հայուհի, որն օժտված է այդքան վեհ զգացմունքներով ու բանականությամբ, որը, ելնելով նվիրվածության, սիրո ու պարտքի զգացումից, այդքան հերոսաբար ծառայում է Հայաստանին, այդպես կապված է հայրենիքի ճակատագրին ու ճշմարտությանը:

Սիլվա Կապուտիկյան

Հայաստանն աշխարհին հրաշալի բանաստեղծներ է տվել, բայց բոլորը մեզնից մի տեսակ տարբաժանված են այլ մի լեզվի «չինական պատով» (թեկուզ և Բոյունովի թարգմանություններում): Առաջին անգամ հայ-ռուսական պոետ Սեդա Վերմիշևայի բանաստեղծություններում ուրարտական ոգին մեր առջև երևան եկավ իր նախեղակ, բայց մեզ հարազատ զուգորդումներով ու խորհրդանշաններով: Մեր երկրներին միավորում են քրիստոնեական հավատքը, պատմական ճակատագիրը և Սեդա Վերմիշևայի բանաստեղծություններում ասես թե պսակվում են երկու լեզուներ՝ ռուսերենն ու հայերենը...

Յուլիա Շիշևա

(134)